

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

«ԿՈՆՏՐՈՆՆԱՐ»

«CONTROL STAR»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ

LIMITED LIABILITY

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՍՐ

COMPANY

ՈՒԿԵՐՈՒԹՅՈՒՆ

/Հայաստանի Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ /ԶԿ խորհրդի
18.11.2022թ-ի թիվ 42-Ա որոշմամբ ռեեստրում գրանցման ամսաթիվը՝ 18.11.2022թ,
հիմնական գրանցման համարը թիվ /1220728/

ՀՎՀՀ 01046204

ք. Երևան, Էմինեական 2-ի. 10/2

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Պրինտարմ Դանվեստ» ՍՊԸ մասնակցներին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Պրինտարմ Դանվեստ» ՍՊԸ այսուհետ՝ «Ընկերություն»,
ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին
ավարտված տարվա համազարկի ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում
փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին առանձին հաշվետվությունները, և
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ
հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ «Վերապահումով կարծիք»-ի հիմք բաժնում նկարագրված
հարցի հնարավոր ազդեցությունից, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները,
բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված
տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական
հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք նշանակվել ենք ընկերության աուդիտոր 2024թ մարտի 4-ին, ուստի
հնարավորություն չենք ունեցել հետևելու պաշարների գույքագրման գործընթացին 2023թ-ի
տարվա վերջում: Մենք անկարող էինք իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր,
որպեսզի ինքներս համոզվեինք պաշարների առկայության և քանակի վերաբերյալ 2023թ-
դեկտեմբերի 31-ի դրությամբ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ
ներառված են 1452283.0 հազ դրամ գումարով: Նշված հարցի արդյունքում, մենք անկարող
էինք որոշել արդյոք որևէ ճշգրտում անհրաժեշտ է պաշարների, ինչպես նաև դրա հնարավոր
հետևանք կուտակված շահույթի ցուցանիշի, ինչպես նաև տարվա շահույթի գծով
ֆինանսական հաշվետվությունների մեջ:

հետևանք կուտակված շահույթի ցուցանիշի, ինչպես նաև տարվա շահույթի գծով ֆինանսական հաշվետվությունների մեջ:

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այս ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ընկերությունից՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջներին համապատասխան համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և Հայաստանի հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության համադրելի տեղեկատվությունը՝ 2022թ-ի ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի ընկերությունը լուծարելու կամ ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խնդրություններից, անկախ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խեղամտորոն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն

Ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացված աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում կասկածամտություն: Ի լրումն մենք նաև՝
-Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք կհանդիսանան աուդիտորի կարծիք արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերելու ռիսկը ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղձարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

-Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

-Գնահատում ենք կիրառած հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը:

-Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելը, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե աուդիտորը եզրահանգում է, որ առկա է էական անորոշություն, ապա պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն, ապա ձևափոխել կարծիքը: Աուդիտորի եզրահանգումները հիմնված են միևնույն աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

-Եթե ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործառույթների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

-Ի լրումն այլ հարցերի կառավարման օգակներում գտնվող անձանց հաղորդակցում ենք աուդիտորի առաջադրանքների պլանավորած շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի ներառյալ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունները:

Տնօրեն՝

Լ. Շահրոյան

Աուդիտի ղեկավար՝
Հ. Կարապետյան

«ԿՈՆՏՈՒՆ ՍԹԱՐ» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան Եմինեսկու 24/10/20

2024թ. հունիսի 27